

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ 2-Ն-5-Ն ԵՎ 6-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 2-Ն որոշումը նորմատիվ բնույթի դրույթներ չի պարունակում, հետևաբար՝ որոշման հերթական համարից հետո «Ն» տառի նշումը սխալ է:

Որոշման նախաբանում հղումը պետք է կատարվեր «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի ոչ թե 16-րդ, այլ՝ 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին:

Որոշմամբ ընդունված հավելվածի (կանոնակարգի) դրույթները սխալ են համարակալված: Հավելվածի 4-րդ գլխի 11-րդ կետում և 6-րդ գլխի 26-րդ կետում նշված «համայնքի ղեկավարի» բառերը փոխարինել «համայնքապետարանի» բառով:

Հավելվածի 6-րդ գլխի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «5. սահմանում է համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ», 6-րդ կետում «կարգով» բառից հետո նշված «նշանակում է տեղական հանրաքվե» բառերը փոխարինել «ընդունում է հանրաքվե անցկացնելու մասին որոշում» բառերով:

Թիվ 3-Ն որոշմամբ հաստատվել է համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասի՝ մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում հաշվետու տարում հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություն, որը ենթակա է հրապարակման՝ օրենքով սահմանված կարգով: Սակայն համայնքի ավագանու հաստատմանը ներկայացվել է միայն համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

Անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով մինչև ս/թ մարտի 1-ը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել նաև համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ 2019 թվականի հաշվետվությունը:

Թիվ 4-Ն որոշմամբ կատարված գումարային փոփոխություններով խախտվել է բյուջեի հավասարակշռությունը: Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի՝ համայնքի բյուջեում կատարվող փոփոխությունները և (կամ) լրացումները չեն կարող խախտել համայնքի բյուջեի հավասարակշռությունը:

Որոշման մեջ «2.Տարեսկզբի ազատ մնացորդ» բաժնի 1-ին կետում և 1-ին կետի «գ» ենթակետում նշված «2019» և «2018» թվերը համապատասխանաբար փոխարինել «2020» և «2019» թվերով, «3.Ծախսահին մաս» բաժնի 2-րդ կետում՝ «24192.6» թիվը՝ «24195.6» թվով:

Թիվ 5-Ն որոշման և որոշմամբ սահմանված հավելվածի վերնագրերը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՍԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒՇՄԱՆՆ ՈՒՂՂԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»:

Թիվ 6-Ա որոշման մեջ իրավական ակտի ընդունման տարեթիվը՝ «2019» թիվը փոխարինել «2020» թվով:

Որոշման նախաբանում կատարված հղումը թերի է գրառված: Բացի այդ, որոշումն անորոշ է, նշում չկա՝ հատկացվող գումարի չափի և ձեռք բերվող ավտոմեքենայի տեսակի վերաբերյալ:

Կատարող՝ Ն.Մարտիրոսյան
21.02.2020թ.